ՍԱՂՄՈՍ 11

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
ՏԵՐԸ ապաստան ու պաշտպանություն MT նախաբան «Գլխավոր երաժշտին, Դավթի սաղմոս»	Հավատք ՏԻՐՈՋ արդարության վրա	Վստահություն արդարության համար Աստծո հոգածության	Վստահություն ՏԻՐՈՋ վրա	Շիտակ մարդու վստահությունը
11:1-3	11:1-3	11:1-3	11:1-3	11:1
				11:2-3
11:4-7	11:4-6	11:4-7	11:4-5	11:4
				11:5-6
			11:6-7	
	11:7			11:7

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 11:1-3
[1]Հույսս դրի ՏԻՐՈՋ վրա,
Ինչպե՞ս *կարող* եք իմ անձին ասել. «Թռի՛ր ձեր սարերը, *ինչպես* թռչուն»,
[2]Քանի որ, ահա մեղավորները աղեղ են լարում,
Իրենց նետերն ամրացնում են լարին,
Որպեսզի գաղտնորեն սրտով շիտակներին հարվածեն:
[3]Եթե հիմքերը խախտվեն, արդարն ի՞նչ է անելու:

11:1 «Հույս» /անգլ.՝ «ապաստարան»/ Տե՛ս Սաղմ.2:12, 5:11-12 գրառումը: Սա (BDB 340, KB 337, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) պարբերաբար կրկնվող հրաշալի փոխաբերություն է պաշտպանության և ապահովության վերաբերյալ (տես՝ Սաղմ.34:22, 37:40):

Դավթի խորհրդատուները (կամ թշնամիները) ասում էին «թռի՛ր/վազիր» (Սաղմ.11:1բ), սակայն Դավիթն ասում էր. «ինչո՞ւ վազեմ» (Սաղմ.11:1ա, 2-3): Աստված է մեր ապաստարանը և Նա գիտի թե ինչի միջով ենք մենք անցնում: Նա մեր հետ է և մեր կողմից: Նայի՛ր Նրան և ոչ թե հանգամանքներին:

❖ **«թռիր ձեր սարերը, *ինչպես* թռչուն»** MT-ն տալիս է ՀՈԳՆԱԿԻ (BDB 626, KB 678, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ), սակայն *Qere* կարդացվում է ԵԶԱԿԻ:

Թվում է, թե ամբարիշտը (այսինքն՝ ՀՈԳՆԱԿԻ ԲԱՅԸ) դիմում է հավատարիմին փախնելու ՅԱՀՎԵԻ պաշտպանության մեջ (այսինքն՝ «ապաստարանը» և «սարը» զուգահեռներ են, տես՝ Սաղմ.121:1): Ուստի այս արտահայտությունը հեգնանք է՝ ծաղր:

UBS *Հեռնարկը* ասում է, որ 1 և 4 համարները տեղի են ունենում տաճարում և ուստի, սաղմոսերգուի ընկերները՝ նրա հետ երկրպագողներն են, որ կոչ են անում իրեն լուռ փախնելու դեպի անապատի ապաստարանը:

Կարծում եմ Սաղմ.11:3-ի «հիմքերը» նաև համազոր են «ապաստանի» և «սարերի»: Դրանք վերաբերում են ՅԱՀՎԵԻ ներկայությանը և ճշմարտությանը (տես՝ Սաղմ.87:1, 119:152) իր ժողովրդի հետ, որը ամբարիշտները ուրանում են:

11:2-3 Այս համարները հնարավոր է դիտարկել երկու կերպ՝

1. խորհուրդը (ա) ամբարշտի կամ (բ) երկրպագության վայրում իր ընկերները շարունակում են մինչև Սաղմ.11:3:
2. սաղմոսերգուն պատասխանում է այն մարդկանց, ովքեր կոչ են անում նրան փախնելու՝ թռնելու Սաղմ.11:1բ-ում

11:2 Սա նկարագրում է ամբարշտի չարամիտ գործերն ու ծրագրերը:

1. աղեղ են լարում – BDB 201, KB 131 *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ.7:12, 37:14
2. նետերն ամրացնում են լարին – BDB 465, KB 464, *Polel* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ.64:3
3. հարվածեն – BDB 434, KB 436, *Qal* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ, տես՝ Սաղմ.64:6:

❖ **«սրտով շիտակ»** Անմեղ մարդիկ գոյություն չունեն: Այդուհանդերձ պարզ է, որ կան երկու տեսակի մարդիկ՝

1. ովքեր փնտրում են ՅԱՀՎԵԻՆ և ապրում են Նրան հաճեցնելու համար
2. ովքեր ապրում են իրենց համար, կարծես թե ո՛չ ուխտ կա, ո՛չ էլ ուխտի Աստված

11:3 Արդարի միակ հույսը ՅԱՀՎԵԻ ճշմարտությունն է և Նրա ներկայությունը: Նա է օգնության միակ աղբյուրը: Եթե Աստված չկա (տես՝ Սաղմ.10:4, 14:1, 36:1), ապա հավատարիմ հետևորդն է հիմարը, սակայն եթե կա բարոյական Արարիչը, որի առջև կանգնելու են բոլոր գիտակից մարդիկ և հաշվետու լինեն (տես՝ Սաղմ.11:4-7), ապա անհնազանդ, ամբարիշտ, եսակենտրոն մարդն է (հեթանոս կամ իսրայելացի) հիմարը:

Հավանական է, որ Սաղմ.11:3-ի երկրորդ տողը վերաբերում է Աստծուն (այսինքն՝ «Արդարը», տես՝ AB, էջ՝ 69, և ծանուցագիր Հրեական Սերտողության Աստվածաշնչում, էջ՝ 1294): Տես Սաղմ. 11:5, որտեղ ՅԱՀՎԵՆ և արդարը (BDB 843) կարող են լինել հակադրության մեջ. երկուսն էլ Իսրայելի Աստծո տիտղոսն են:

❖ **«հիմքեր»** Այս բառի՝ արմատի ստուգաբանությունը שׁת (BDB 1011, KB 1666-1667) անհայտ է: Սա հազվադեպ բառ է, սակայն միաձայն համաձայնություն կա, որ սա վերաբերում է ուխտի օրենքներին: KB տալիս է ամենավերջին գիտական կասկածները:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 11:4-7

[4]ՏԵՐՆ Իր սուրբ տաճարում է, ՏԻՐՈՋ գահը երկնքում է.
Նրա աչքերը տեսնում են, Նրա արտևանունքները զննում են մարդկանց որդիներին:
[5]ՏԵՐԸ քննում է արդարին, բայվ Նրա անձը
Ատում է ամբարշտին ու անիրավություն սիրողին:
[6]Ամբարիշտների վրա որոգայթներ է տեղալու,
Կրակ ու ծծումբ և սարսափելի փոթորիկ.
***Սա է լինելու* նրանց բաժակի բաժինը,**
[7]Քանի որ արդար ՏԵՐԸ արդարություն է սիրում,
Նրա երեսը շիտակին է նայում:

11:4-7 Այս պարբերությունը պատասխանում է Սաղմ.11:3-ում ամբարշտի տված հարցին: Ինչպես որ պատահում է, Սաղմոս 11:3-ի «հիմքերը» չեն խախտվում:

11:4 ՅԱՀՎԵՆ բնակվում է երկնքում (տես՝ Հատուկ Թեմա. Երկինքները և երրորդ երկինքը), սակայն Նա հայտնվում է (այսինքն՝ Իրեն հասանելի դարձնում) *Քերովբեների* թևերի միջև՝ ուխտի տապանակի վրա (տես՝ Եսայի 66:1): Երկինքն ու երկիրը հանդիպում են Սրբության Սրբարանում՝ Երուսաղեմի տաճարում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ ՈՒԽՏԻ ՏԱՊԱՆԱԿԸ (Ելից 25:10-22)
SPECIAL TOPIC: THE ARK OF THE COVENANT (Exodus 25:10-22)

I. Վայրը և նպատակը՝
   Ա. ՅԱՀՎԵԻ բնակության վայրն է (այսինքն՝ Նրա ոտքերի պատվանդանը, տես՝ 1 Մնաց. 28:2, Սաղմ.132:7, Եսայի 66:1) Իր ժողովրդի հետ, տապանակի վրա՝ *քերովբեների* թևերի միջև (տես՝ Հատուկ Թեմա. *Քերովբեներ*):
   Բ. թողության վայր (այսինքն՝ ողորմության աթոռ) բոլոր մարդկանց համար (տես՝ Իսրայել, Ղևտացիների 16 և 3 Թագ.8:27-30, օտարականների համար՝ 8:41, 43, 60):

II. Պարունակությունը
   Ա. Ռաբբիական ավանդույթը՝
      1. քարե երկու տախտակները, որոնց վրա ՅԱՀՎԵՆ գրեց Տասնաբանյան (տես՝ Ելից 31:18, 32:15-16):
      2. երկու արծաթե ձողեր, որոնք պահում էին տախտակները (սուրբգրային հղումներ չկան)
      3. առաջին երկու տախտակների կտորները, որոնք Մովսեսը ջարդեց, քանի որ Իսրայելը (Ահարոնը) ոսկե հորթ էին պատրաստել և երկրպագում էին (տես՝ Ելից 32:19, 2 Օր.9:17, 10:2):
      4. ամբողջ Թորայի կրկնօրինակը (տես՝ Ելից 25:16)
      5. Աստծո անունները (տես՝ 3 Թագ.8:29) որ ձևավորվել էր Քաբբալայում՝ հրեական
   Բ. սուրբգրային հղումները պարունակության մասին (հայտնի չէ, թե այս համարները վերաբերում են տապանակի ներսում գտնվող առարկաներին, թե՞ շուրջը գտնվողներին)
      1. մանանայով սափոր (տես՝ Ելից 16:31-36)
      2. Ահարոնի ծաղկած գավազանը (տես՝ Թվոց 17:4,10, Եբր.9:4)
      3. Փղշտացիների հանցանքի զոհերը (5 ոսկե առնետները և ոսկե թութքերը, տես՝ 1 Թագ.6:3-4,8)
      4. Տաս Պատվիրանների կրկնօրինակը (տես՝ 2 Օր.10:4-5, 31:26)

Սողոմոնի Տաճարի նվիրման սրբագործման օրը՝ 3 Թագավորաց 8-ում, ասվում է, որ Տապանակի մեջ կային միայն երկու քարե տախտակները (այսինքն՝ Տաս Խոսքերը, տես՝ 3 Թագ. 8:9):

III. Տապանակի գտնվելու հավանական վայրը՝

Ա. Պատմական տարբերակները

1. Սիսակի կողմից տարվել է Եգիպտոս (Ք. Ա. 935-914թթ), երբ Ռոբովամ թագավորի՝ Սողոմոնի որդու թագավորության հինգերորդ տարվա մեջ նվաճեց Հուդան (Ք. Ա. 926թ) (տես՝ 3 Թագ. 14:25-26, 2 Մնաց. 12:9):
2. տարվել է Եգիպտոս (Զոար, Թանիս, Ավարիս՝ տարբեր անուններով է տրված Սեթի Ա-ի դելտա մայրաքաղաքը) Նեքավով II Փարավոնի կողմից, որը նաև գերեվարեց Դավթի սերնդից Հովաքազին (Հովսիայի որդին) Ք. Ա. 597թ-ին (տես՝ 4 Թագ. 23:31-35, 2 Մնաց. 36:1-4):
3. տարվել է Բաբելոն Մարդուկի տաճարը՝ Նաբուգոդոնոսոր II-ի կողմից, երբ Սեդեկիան գերեվարվեց (Ք. Ա. 586թ) և Տաճարը այրվեց (տես՝ 4 Թագ. 25:9,13-17, 2 Մնաց. 36:18):

Բ. Հրեական ավանդույթները

1. պահված է Նաբավ /Փասգա/ լեռան վրա՝ Երեմիայի կողմից, նախքան Երուսաղեմի անկումը (2 Մակկաբ. 2:4-5):
2. Բարուքի II անկանոն գիրքն ասում է, որ մի հրեշտակ թաքցրել է այն
3. պահված է անհայտ կերպով, սակայն վերադարձվելու է Եղիայի կողմից, հենց Մեսիայի գալուստի ժամանակ (տես՝ Մաղ. 4:5)
4. պահված է Գերեսիմ (Սյուքեմ) լեռան վրա, որտեղ սամարացիները կառուցեցին ՅԱՀՎԵԻ համար իրենց տաճարը:
5. թաղվել է տաճարի տակ (այսինքն՝ Մորիա լեռան վրա) նախքան Նաբուգոդոնոսորը կգրավեր Երուսաղեմը:

11:4բ-5ա ՅԱՀՎԵՆ գիտի (ԱՆԿԱՏԱՐՆԵՐ, որոնք ցույց են տալիս հատկանշական գործողություններ)

1. ինչ է տեղի ունենում երկրի վրա
2. մարդու սրտի շարժառիթները

Նա քննում է (BDB 103, KB 119, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Հոբ 7:18, Սաղմ. 7:9, 26:2, 139:1,23) մարդկանց (*ben Adam*) մեղքերը, թե՛ արդարների և թե՛ ամբարիշտների: ՆԿ-ը արձանագրում է դեպքը Մատթ. 12:36-37, 16:27, 25:31-46, Գործք 10:42, Հռոմ. 2:16, 14:10, 12, 1 Պետ. 4:5 և Հայտն. 20:11-15-ում: Աստծո քննելը թե՛ ժամանակի մեջ է (ժամանակավոր) և թե՛ ժամանակից դուրս (վախճանաբանական): Հաճախ մենք հնձում ենք այս կյանքում այն, ինչ ցանում ենք, սակայն եթե չենք հնձում՝ այդ օրը մոտենում է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄ Է ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ
SPECIAL TOPIC: GOD TESTS HIS PEOPLE

«Ստուգել» տերմինը (BDB 650, KB 702, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ) կիրառվում է «փորձելու» իմաստով: Այն կիրառվում է մարդուն մի տեղ հասցնելու իմաստով, որտեղ նրանք գիտակցում են և գործում իրենց սահմանած առաջնահերթություններով: Ակնհայտ է, որ Ծննդոց 12-ից մինչև 22 Աստված ներկայացնում է Աբրահամին մի շարք իրավիճակներում (ռաբբիներն ասում են տասը), որպեսզի իր սերն ու վստահությունը ուղղի Աստծո մեջ և միայն Աստծո վրա: Այս ստուգարքները այնքան էլ Աստծո համար չէին, այլ Աբրահամի և նրա համար, որ Աբրահամը ճանաչի իրեն

քաղդեացիների Ուր քաղաքից դուրս կանչող Աստծուն: Աբրահամին ասվեց, որ թողնի իր ընտանիքը, տունը, ընկերներին, ժառանգությունը, ավանդույթները և անգամ ապագան (իր խոստացյալ որդուն) Աստծուն հավատքով հետևելով: Աստված ստուգում է Իր բոլոր զավակներին իրենց առաջնահերթության ասպարեզում (տես՝ Մատթ. 4:1բ, Եբր. 5:8, 12:5-13):

Աստված ստուգում է (BDB 650), որպեսզի ճանաչի (BDB 393, տես՝ Հատուկ Թեմա. Ճանաչել): Իսրայելը հաճախ փորձեց Աստծուն իրենց անհնազանդությամբ և Աստված ապացուցեց, որ հավատարիմ է Իր խոսքին: Այժմ Աստված է հնարավորություն ընձեռնելու Իսրայելին և իր ժողովրդին ցուցաբերելու իրենց դավանած հավատարմությունն ու հավատքը՝

1. Աստված փորձեց Իր ժողովրդին՝ հավաքական առումով.
   ա. Ելից 15:25, 16:4, 20:20
   բ. Բ Օրինաց 8:2,16, 13:3
   գ. Դատ. 2:22, 3:1,4
2. Աստված փորձեց անհատ Իսրայելացիների՝
   ա. Աբրահամին, Ծնն. 12:1-12
   բ. Եզեկիային, 2 Մնաց. 32:31
3. Սաղմոսերգուները կանչում են Աստծուն, որ փորձի իրենց, որպեսզի հեռացնի իրենցից թաքուն մեղքերը (տես՝ 26:2, 139:23):
4. ՆԿ-յան Աստծո ժողովուրդը հավասարապես փորձվում են, ինչպես Հիսուսը փորձվեց (Մատթեոս 4, Ղուկաս 4, Եբր. 5:8): Տե՛ս Հատուկ Թեմա. Փորձել բառի հունարեն տերմինները և դրանց նշանակությունները:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՅԴ ՕՐԸ
SPECIAL TOPIC: THAT DAY

Այս արտահայտությունը՝ «այդ օրը» կամ «այդ օրվա մեջ» հանդիսանում էր ութերորդ դարի մարգարեների համար մի կերպ, որով խոսում էին Աստծո այցելության մասին (ներկայության), թե՛ դատաստանի և թե՛ վերականգնման համար:

Ովսեա		Ամովս		Միքիա	
դրական	բացասական	դրական	բացասական	դրական	բացասական
1:11	1:5		1:14 (2)		2:4
	2:3		2:16		3:6
2:15			3:14	4:6	
2:16	4:5		5:18 (2)		5:10
2:18	5:9		5:20		7:4
2:21	6:2		6:3	7:11 (2)	
	7:5		8:3	7:12	
	9:5	9:11	8:9 (2)		
	10:14		8:10		
			8:13		

Այս ձևաչափը բնորոշ է մարգարեներին: Աստված իր ժամանակին մեղքի հարցը լուծելու է, սակայն Նա նաև առաջարկում է ապաշխարության և թողության օր այն մարդկանց, ովքեր հոժար են փոխելու իրենց սրտերը և գործերը (այսինքն՝ ընդունեն նոր սիրտ, նոր միտք, և նոր հոգի, տես՝ Եզեկ.36:22-27): Աստծո փրկագործության և վերականգնելու նպատակը կիրագործվի: Նա կունենա մի ժողովուրդ, որն արտացոլում է Իր բնավորությունը: Ստեղծագործության նպատակը (Աստծո և մարդկության միջև փոխհարաբերությունը) կիրականանա:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ (ՀԿ)
ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ

11:5 «Նրա անձը ատում է» Սա մարդաբանական լեզու է: Տես Հատուկ Թեմա. Աստված նկարագրված որպես մարդ: Տես՝ Ելից 15:9, Եսայի 1:14, Երեմ.5:9, 29, 6:8, 9:9, 32:41, Եզեկ.23:18 միևնույն *nephesh* (BDB 659, տես՝ Սաղմ.3:2 և Ծննդ.35:18-ի գրառումը) տերմինի կիրառությունը:

Հնարավոր է, որ այս համարը գործ ունի միայն ամբարշտի հետ և որ «արդարը» Աստծո համար տիտղոս՝ անուն է (տես՝ Սաղմ.11:3բ): Եթե այդպես է, ՅԱՀՎԵՆ և «Արդարը» հակամարտության մեջ են (տես՝ Սաղմ.11:3բ, 7ա):

ՀԿ-ը թվարկում է մի քանի բաներ, որոնք ատում է ՅԱՀՎԵՆ՝

1. կռապաշտությունը՝ 2 Օր.12:31, 16:22, Երեմ.44:4, Ովս.9:15
2. բոլոր նրանց, որ անօրենություն են գործում՝ Սաղմ.5:5
3. բռնություն սիրող մարդուն՝ Սաղմ.11:5

4-10. տե՛ս Առակ.6:16-19-ում ցանկը (նաև Զաք.8:16-17 գրառումը)

11. Իսրայելի սուտ ու կեղծ երկրպագությունը՝ Ես.1:14, Ամովս 5:21, 6:8
12. ամուսնալուծությունը՝ Մաղ.2:16

11:6

NASB, NKJV, NRSV, NJB, LXX	**«Նա տեղալու է»**
NET Աստվածաշունչ	**«թող ՏԵՐԸ տեղացնի»**

ԲԱՅԸ (BDB 565, KB 574) ՀԱՅՑԱԿԱՆ է, որը NET Աստվածաշունչը և Խարիսխ Աստվածաշունչը թարգմանում են ճիշտ, սակայն մյուս թարգմանությունները ենթադրում են այն որպես ՀԱՅՑԱԿԱՆ կազմությամբ, բայց ոչ իմաստով:

NASB, MT, LXX	**«որոգայթներ»**
NASB լուսանցք	**«կրակի ածուխներ»**
NKJV, NRSV, TEV, NJB, JPSOA	**«ածուխներ»**

Համատեքստը կարծես թե ուղղում է պահանջում «որոգայթներից» ուղղում פחים (BDB 809) «ածուխների»՝ פחמים (BDB 809): UBS Տեքստային Նախագիծը «որոգայթները» գնահատում է “B”:

11:6բ Արդյո՞ք սա վերաբերում է՝

1. այս կյանքի վերաբերյալ պոետիկ չափազանցության նկարագրության
2. հանդերձյալ կյանքում դատաստանի իրողությանը (տես՝ 2 Օր.32:22)

Տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. Որտե՞ղ են մեռելները:</u>

❖ **«կրակ»** Սա պարբերաբար կրկնվող փոխաբերություն է, որը վերաբերում է դատաստանին և մաքրվելուն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿՐԱԿ (BDB 77, KB 92)
SPECIAL TOPIC: FIRE (BDB 77, KB 92)

Սուրբ Գրքում կրակը ունի թե՛ դրական և թե՛ բացասական նշանակություն:

Ա. Դրականը
1. տաքացնում է (տես՝ Ես.44:15, Հովհ.18:18)
2. լուսավորում է (տես՝ Ես.50:11, Մատթ.25:1-13)
3. եփում է (տես՝ Ելից 12:8, Ես.44:15-16, Հովհ.21:9)
4. զտում է (տես՝ Թվոց.31:22-23, Առակ.17:3, Ես.1:25, 6:6-8, Երեմ.6:29, Մաղ.3:2-3)
5. սրբություն (տես՝ Ծննդ.15:17, Ելից 3:2, 19:18, Եզեկ.1:27, Եբր.12:29)
6. Աստծո առաջնորդություն (տես՝ Ելից 13:21, Թվոց 14:14, 3 Թագ.18:24)
7. Աստծուց զորացում (տես՝ Գործք 2:3)
8. Աստծո պաշտպանություն (տես՝ Զաք.2:5)

Բ. Բացասական՝
1. այրում է (տես՝ Հեսու 6:24, 8:8, 11:11, Մատթ.22:7)
2. բնաջնջում է (տես՝ Ծննդ.19:24, Ղևտ.10:1-2)
3. բարկություն (տես՝ Թվոց 21:28, Ես.10:16, Զաք.12:6)
4. պատիժ (տես՝ Ծննդ.38:24, Ղևտ.20:14, 21:9, Հեսու 7:15)
5. կեղծ վախճանաբանական՝ էսկատոլոգիական նշան (տես՝ Հայտն.13:13)

Գ. Աստծո բարկությունը մեղքի հանդեպ արտահայտվում է կրակի փոխաբերությամբ՝
1. Նրա բարկությունը վառվում է (տես՝ Ովս.8:5, Սոփ.3:8)
2. Նա կրակ է թափում (տես՝ Նավ.1:6)
3. Հավիտենական կրակ (տես՝ Երեմ.15:14, 17:4)
4. Էսկատոլոգիական դատաստան (տես՝ Մատթ.3:10, 13:40, Հովհ.15:6, 2 Թեսաղ.1:7, 2 Պետ.3:7-10, Հայտն.8:7, 16:8, 20:14-15)

Դ. Կրակը հաճախ հայտնվում է աստվածհայտնության ժամանակ՝
1. Ծննդ. 15:17
2. Ելից 3:2
3. Ելից 19:18
4. Սաղմ. 18:7-15, 29:7
5. Եզեկ. 1:4,27, 10:2
6. Եբր. 1:7, 12:29

Ե. Աստվածաշնչում զետեղված շատ փոխաբերությունների պես (այսինքն՝ թթխմոր, առյուծ) ըստ համատեքստի կրակը կարող է լինել օրհնություն կամ անեծք:

NASB, NKJV	**«վառվող քամի»**
NRSV, TEV,	
NJB, JPSOA,	
NRSV, REB	**«այրող քամի»**
LXX	**«կատաղի քամի»**
NET	**«փոթորիկ»**

Այս հազվադեպ տերմինը (BDB 273) հիմնականում նշանակում է «տաքություն»: Այն կիրառվում է՝

1. Սաղմոս 11:6-ում՝ նկարագրելով քամի
2. Սաղմոս 119:53-ում՝ որպես վառվող զայրույթ
3. Ողբ 5:10-ում՝ որպես այրող սով
   Թարգմանչական հարցը կայանում է նրանում, թե «Արդյո՞ք այս տերմինը շարունակում է ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ (BDB 809, 77, 172, տես՝ Հոբ 1:16) շարքը, թե սկսում է մի նոր փոխաբերություն»:
   1. ավերիչ մրրիկ՝ (տես՝ Սաղմ. 58:9, Առակ. 1:27, Ովս. 8:7, Ամովս 1:14, Նավում 1:3)
   2. շոգ անապատ՝ (տես՝ Սաղմ. 90:5-6, 103:15-16)

❖ **«նրանց բաժակը»** Սա եբրայերեն դարձվածք է մարդու ճակատագրի վերաբերյալ, և սովորաբար բացասական իմաստով (տես՝ Սաղմ. 75:8, սակայն երբեմն դրական իմաստով՝ Սաղմ. 16:5): Այն կապված է հարբեցողության հետ (տես՝ Ես. 51:17, Երեմ. 25:15):

Այս նույն դարձվածքը կիրառվեց Հիսուսի կողմից՝

1. Մատթ. 20:22, Մարկ. 10:38,39-ում
2. Մատթ. 26:39, 42, Մարկ. 14:36, Ղուկ. 22:42-ում
3. Հովհաննես 18:11-ում

11:7 ՅԱՀՎԵՆ բնութագրվում է որպես արդար (տես՝ Հատուկ Թեմա. Արդարություն, տես՝ Ելից 9:27, Եզրաս 9:15, Նեեմ. 9:8, Սաղմ. 119:137, Երեմ. 12:1, Ողբ 1:18, Հովհ. 17:25, Հայտն. 16:5,7):

Ահա արդար Աստծո գործերից մի քանիսը՝

1. Նա քննում է մարդկանց սրտերը՝ Սաղմ. 7:9, 11:5, Երեմ. 20:12
2. Նա արդարությամբ է դատում՝ Սաղմ. 7:11
3. Նա սիրում է արդարությունը՝ Սաղմ. 11:7, 33:5, 146:8
4. Նա ողորմած ու արդար է՝ Սաղմ. 116:5
5. Նա կտրտում է ամբարիշտների թոկերը՝ Սաղմ. 129:4
6. Նա արդար է Իր բոլոր ճանապարհներում՝ Սաղմ. 145:7, Դան. 9:14:

11:7բ «Արդարը Նրա երեսը կտեսնի» Հետաքրքիր է արդյո՞ք սա հանդիսանում է հենց այն աղբյուրը, որից բխում են Հիսուսի խոսքերը Մատթ. 5:8-ում: Աստված սուրբ է (Ղևտ. 19:2, Մատթ. 5:48): Ոչ ոք չի կարող տեսնել Աստծուն և ապրել (այսինքն՝ Ելից 33:11, 17-23), մինչդեռ նրանք, ովքեր արդար են հռչակվել Նրա մեջ՝ Հիսուսի, կունենան մտերմիկ փոխհարաբերություն Աստծո հետ (տես՝ Հոբ. 19:25-27, Սաղմ. 17:15, Մատթ. 5:8, 1 Հովհ. 3:2):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ի՞նչ է նշանակում «ապաստան գտնել, հույս դնել»:
2. Բացատրե՛ք Սաղմ. 11:3 ձեր բառերով:
3. Ըստ Սաղմ. 11:4-ի, որտե՞ղ է ՅԱՀՎԵՆ՝ երկնքում, թե տաճարում:
4. Արդյո՞ք ՅԱՀՎԵՆ փորձում /քննում/ է մարդկանց (Սաղմ. 11:5):